ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ․ ՆԻՒ ԵՈՐՔ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 15, 1895․ ԹԻՒ 16 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 103

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. V, 1895.

TURKEY APPEALS TO RUSSIA & FRANCE

ԹՈՒՐՔԸ Կ'ԱՂԱՉԷ ԶՌՈՒՍԻԱ ԵՒ ԶՖՐԱՆՍԱ

(Հրատարակութիւն ՀԱՅՔի)

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ին

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուլթանին դիմումն Ռուսիոյ և Ֆռանսայի. ծաղրանկար.—Հեռագրական լուրեր.—Սասուն. Ցեղագրութիւն Սասնոյ, Տալւորիկ, Վարդան Տիլօյեան, Սասունցւոց Հայերէնն, Սասնոյ Բարեբերութիւնն, Սասունցւոց Արհեստաւորութիւնն, Սասունցւոց վաճառականութիւնն.—Նամակ Կ.Պոլսէ.— Քաջալերուեցէ՛ք, Հայե՛ր.—Տագնապ Սուլթանին.—Խմէթ.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլիս, Սեպտ. 4. Ռիւսթէմ փաշա, Թուրքիոյ դեսպանն յԱնգլիա, հեռագրեր է Արտաքին Գործոց Նախարարին թէ Լ. Սօլզպէրիի հետ տեսակցութիւն մ'ունեցաւ վերաբերութեամբ Հայկական Խնդրոյն։ Ինքն վստահացոյց զԼորտն թէ Բ. Դուռն հակառակ չէր բարեկարգութեանց զորս Պէրլինեան դաշնագիրն ստորագրող տէրութիւնք կ'առաջարկէին, սակայն թէ չէր կրնար Թուրքիա թոյլ տալ միջազգային Ցանձնաժողովոյ մի իշխանութեանն ի Հայաստան։

Լ. Սօլզպէրի պատասխանեց թէ այդ պարագայից տակ անօգուտ էր տեսակցութիւնն շարունակել։ Եթէ, ասաց, Դուռն յամառի մերժել, տէրութիւնք պիտի ձեռնանկեն թելադրեալ բարեկարգութեանցն և պիտի գոհ մնան։ Եւ եթէ այն ատեն ալ Դուռն տակաւին հակառակի, աւելցուց նախարարապետն, այդ պիտի լինի Թուրքիոյ բաշխման նշանն։

Այս հեռագիր խորին անհանգստութիւն պատճառեր է հոս։

—Լոնտոն, Սեպտ. 5. Ռիւսթէմ փաշա կ'ասէ թէ ինքն յղած չէ բնաւ հեռագիր մի որպիսի կը զրուցեն թէ ուղղուած լինի առ Արտաքին Գործոց Նախարարն։

—Կ. Պոլիս, Սեպտ. 5. Մեծ Եպարքոսն պաշտօնանկ է արեր Մշոյ մի քանի պաշտօնեաներն որք յանցապարտ գտնուած են իբրեւ ղօշաքաղ և անգութ դէպ ի Հայս։

Ի Բաղէշ, հեծեալ ոստիկանք յարձակեր են քրդային խմբի մի վերայ որք աւազակութիւններ գործած էին Մշոյ գաւառում։ Քուրդք ծանր կորուստ կրեցին և արտաքսուեցան այն հողերէն զորս Հայոց ձեռքէն առած էին։

—Կ. Պոլիս Սեպտ. 7. Զրոյց կար երէկ թէ Սուլթանն այսօր ծանուցագիր մի պիտի ուղղէր տէրութեանց թէ Հայաստանի վարչութեան նկատմամբ ինչ ինչ կէտերու վերայ կը համակերպի եւրոպական պահանջմանց։

Հոս առ հասարակ այնպէս կը հաւատան թէ Սուլթանն այս զիջումն կ'անէ այն յուսով որ Տէրութիւնք ա՛լ չպիտի պնդեն Քննիչ Ցանձնաժողովոյ օտար պատուիրակներ անդամ նշանակելու։ Նաև կը կարծուի թէ Տէրութիւնք պիտի մերժեն Դրան այդ զիջումներն մանաւանդ որ նոր պահանջներ բանաձեւած են որոց բնութիւնն դեռ անծանօթ կը մնայ։

—Կ. Պոլիս Սեպտ. 8. Երեք տէրութեանց դեսպանատունք ստացան Դրան ծանուցագիրն նկատմամբ Հայաստանի։

Դրան զիջումներն յայնմ կը կայանան թէ երեք դեսպանատանց քարտուղարներն իրաւունք պիտի ունենան ուղղակի յարաբերութիւն անել Թուրք Հսկող Ցանձնաժողովոյ նախագահին հետ։ Քրիստոնեայ ոչ նահանգապետ և ոչ գաւառապետ պիտի կարգուի, սակայն ուրիշ պաշտօնեաներ պիտի ընտրուին ժողովրդի համեմատական թուոց նայելով։ Քրիստոնեայք պիտի ընդունուին ոստիկանութեան մէջ, միւտիւրներն պիտի ընտրուին տեղական Խորհրդոց ձեռամբ, և գիւղական ոստիկանութիւն պիտի հաստատուի։

Չի կարծուիր թէ այս զիջմունք գոհ պիտի անեն զտէրութիւններն։ Կը ցուցնեն թէ, ի պատճառս հալածանաց, քրիստոնեայ բնակիչք այնքան նուազած են շատ տեղեր, որ այժմ փոքրամասնութեան վերածուած են։ Պաշտօնեայք, վասն որոյ, միշտ մահմետական պիտի լինէին։

—Լոնտոն. Սեպտ. 9. Տէյլի Նիւզ՝ փողն հեռագիր մի պիտի հրատարակէ Կարսէն՝ հաստատող թէ նորոգ խժդժութիւններ գործուած են Երիզայի գաւառում։

Աւազակախումբ մի, Օգոս. 12ին, յարձակեցաւ Թուրք ոստիկանաց խմբի մի վերայ և սպաննեց ոստանապետ մի.

Թուրք կառավարութիւնն, առանց ո և իցէ հետախուզութիւն կատարելու, ո-

րոշեց թէ յարձակողքն հայ յեղափոխականներ էին Քէմահէն, որոց դիտումն էր ազատել բանտէն մի քանի նշանաւոր Հայեր։

1,000 զինուորէ բաղկացած զօրութիւն մի յղուեցաւ ի Քէմահ, և հինգ գիւղեր կողոպտուեցան։ 5 հայպար անձինք տնանկացան։ Այր մարդիկ տանջանաց և կանայք ու տղայք անպատուութեան ենթարկուեցան։ Զորս վանք կապտուեցան։

Կը գրուցեն թէ թուրք մանր սպայք հակա-քրիստոնէական ընկերակցութիւն մի կազմած են ա՛յն նպատակաւ որ դՀայս ջարդեն եթէ Դուռն ընդունի զբարեկարգութեան ծրագիրն տէրութեանց։

Նուպար փաշա 400 լիրա նուիրած է ի նպաստ Սասնոյ սովելոց, ի ձեռն Լոնտոնի անգլիական Յանձնախմբին։

Տ. Շիփլի, անգլիական պատուիրակն, և Տ. Փրմէվալսքիճ, ռուսական պատուիրակն, որք կոտորածի դէպքին քննութեան մասնակցելու համար Մուշ յղուած էին, արդէն վերադարձած են ի Կ. Պոլիս, բերելով իրենց տեղեկագրի խոշոր հատորն։

Տիլոնի մեծ յօդուածին թարգմանեալ շարունակութիւնն կը մնայ մեր յաջորդ թուոյ։

«Հայք» անհնարին անձկութեան մէջ է իւր հրատարակումն ամիսն երկու անգամ շարունակելու համար։ Ո՛վ որ կարող է օգնութեան հասնիլ, կը խնդրուի չուտով հասնիլ։

ՀԱՑՔԻ ներկայ թիւն 8 երեսէ կը բաղկանայ, փոխանակ 16ի։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՒ 1.

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Այս հրատարակութիւն անգլիերէն լեզուաւ տեսր մ'է, 48 երեսէ բաղկացած, որ կը պարունակէ (1) մի նախաբան, (2) կոտորածին և Սասնոյ Նկարագիրն Տալորիկցի վկայի մի շրթունքէն. (3) Կլատսթոնի վերջին ատենախօսութիւնն զՀայաստանէ. (4) Տիլոնի մեծ յօդուածն, որ արտատպեալ է Քոնթէմփորէրի Ռիվիւի հրատարակչաց յատուկ թոյլտուութեամբ։

ՍԱՍՈՒՆ

1

ՑԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՍՆՈՑ

Սասնոյ գաւառի մէջ երկու ցեղ միայն կը բնակին— Հայք և Քուրդք։ Քուրդքն երեք ցեղի կը ստորաբաժնուին և են Խանըվտըլի Տուն, Պոզըքցիք և Ուսվի Տուն։

Հայք ոչ միայն մեծամասնութիւն կը կազմեն այլ և շատ աւելի ուշիմ, աշխատասէր և քաջասիրտ են քան զՔրդերըն, այնպէս որ եթէ իրենք իրենց թողուէին, Հայք պիտի լինէին տիրող ցեղն և Քուրդք՝ ծառայող։ Սակայն որովհետև Սասնոյ մօտաւոր դրացութեան մէջ կը գտնուին ուրիշ քուրդ ցեղեր ալ, այսինքն Բագրանցիք, Պատրքցիք, Խիանցիք և Պէլէքցիք. Հայք ստիպուած են նոցա թուային գերակշռութեան առջեւ խոնարհիլ և բաժ վճարել, մանաւանդ որ թուրք կառավարութիւնն ամենայն իրօք Քրդաց թեր և նեցուկ է միշտ ընդդէմ Հայոց։

Քրդերն քրդերէն կը խօսին, և Հայք՝ Հայերէն, բայց բաւական լաւ գիտեն նաև զիրարու լեզու։ Հագուստի կամ տարազի կողմանէ քրդականն շատ չի զանազանիր հայկականէն։ Սակայն Հայք իսկոյն կը ճանաչեն զքուրդն. նոյն իսկ հեռուէն։ Քուրդքն նուազ քաջառողջ է, և մանաւանդ նորա դէմքին գծերն ու արտայայտութիւնն բարբարիկ են, նայուածքն խոժոռ, կասկածոտ, մէկ խօսքով՝ կայ կիսավայրենի բան մի։ Նաև երբ Հայերէն կը խօսի Քուրդն, յայտնի է թէ իրրեւ օտար լեզու կը խօսի զայն։ Քրդերէն խօսելու ատեն ալ ոմանք Հայերէն ինչ ինչ բայատրութիւններ կը գործածեն։

Սասնոյ գաւառակներուն մէջ կարեւոր զանազանութիւն մի կայ նշանակելու։ Հայ գաւառակաց մի քանին են մասնաւորապէս զօրաւոր և քաջ, որք են Սեմալ, Շէնիկ, Կէլիէկուզան, Ալեանցիք, Կէլիէմսուր և նշանաւորն Տալորիկ՝ իւր գիւղախմբով։

2

ՏԱԼՈՐԻԿ

Տալորիկի տեղագրական հանգամանքն կարող կ'անեն գնա դէմ դնել ոևէ թուով բանակի, պայմանաւ որ ռազմամթերք և պաշար չպակսի։

Տալորիկ գիւղ կը պարունակէ Վերի Գեղ կոչուածն, որ կէս ժամու միջոցով բաժնուած է մայր գիւղէն։ Տալորիկ իբրը 90 կամ 100 տնէ կը բաղկանայ։ Ունի եկեղեցի և դպրոց։

Տալորիկ գիւղի անունով կը կոչուին գիւղերու այն խումբն որոց գլխաւորն է Տալորիկ, այնպէս որ Տալորիկ ասելով երբեմն կը նշանակուի տալորիկ գաւառակն, որ կը պարունակէ զՀաքմանք (20 տուն), զՀլողինք (որ կը բաղկանայ երեք գիւղերէ, Քրդուող, Ընծան և Ներքըներ), զՓուրխ (45տ.), զԴվալինք (40 տ.), զՀոսնուտ (12), զՀարթք (որ կը բաժնուի երկուքի, Վերին և Ներքին Հարթք), զՍբղանք (22 տ.), զՁորիր (20 տ.), զԵղկարտ (30 տ.)։

Այս գիւղերու Հայոց ընկերական յարաբերութիւնն հետ Քրդաց թէև բաժվճարողի յարաբերութիւն է առ աւատապետ, սակայն և այնպէս յարաբերութիւնը բնաւ ստրկային հանգամանք չունի։ Քուրդք և Հայք հանապազօրեայ հպատրութեան մէջ չեն, այլ միայն կ'այցելեն գործի աղագաւ։

Այս պատճառաւ է որ Սասնոյ վերոյիշեալ գիւղերու մէջ Հայութիւն մի պահուած է որոյ նմանն ուրիշ ոչ մի գաւառի մէջ կարելի է գտնել։ Հայութեան քան զամենայն սրտոտ, ազատակեաց, բարոյական արութեամբ և մաքրութեամբ նշանաւոր, իւր հայերէն լեզուին կողմանէ զարմանալի նմոյշն է Տալորիկն։

3

ՎԱՐԴԱՆ ՏԻԼՕԵԱՆ

Իրաւ, մեր ուսումնասիրութիւն Սասնոյ մէջ չէ կատարուած, բայց Ասսունցւոյ վերայ, բուն Տալորիկ գաւառի Տալորիկ գիւղի մէկ գիւղացւոյն, Պ. Վարդան Տիլօեանի վերայ, կատարուած է։ Եւ մեր համոզումն այն եղած է թէ այդ հայ ժողովուրդ իւր իմացական ընդունակութեան մասին ևս կը գերազանցէ Հայաստանի ուրիշ գաւառաց հայութիւնն։ Մարդ խօսակցելով անուս, գրեթէ անընթեցագէտ, պարզ Տալորիկցւոյն հետ, շարունակ կը աքանչանայ տեսնելով նորա բաց միտքն, ողջամիտ դատողութիւնն, լայն տեսութիւններն, ուշիմ պատասխաններն, և այդ ամենուն վերայ այնպիսի չնորհալի վարմունք, քաղցր ժպիտ, մարդավարի նիստ ու կաց, որ հազուագիւտ է մեծ քաղաքներու մէջ մեծցած Հայերու քով։

Ես կը խոստովանիմ թէ շատ տարիներէ ի վեր տրուած չէր ինձ ճանաչել հայ մարդ մի որ ինձ այնքան յոյս և հըպարտ զգացում ներշնչէր հայ ազգին ապագային նկատմամբ որքան այս Տալորիկցին։

Սասնոյ լերանց վերայ Հայութեան ամենաթանկ գոհարներու հանք կայ եղեր։ Գիւտն զիս խնդութեամբ կ'արբեցունէ։

Եւ այդ գիւտի մասն է Սասունցւոց լեզուի գիւտն ալ։

4

ՍԱՍՈՒՆՑԻՈՑ ՀԱՅԵՐԷՆՆ

Հայաստանի մեծ մասին մէջ երկար ուղեւորութիւն արած էի և լսած գաւառաբարբառներ, կարդացած էի նաև գրքերու մէջ պէսպէս հայ գաւառական լեզուաց նմոյշ հատուածներ, ուսումնասիրութիւններ, ի միջի այլոց՝ զՀայր Այտընեանին, սակայն այդ ամենն հեռու են ցուցնելէ, կամ գէթ ընդնշմարել տալէ, թէ Սասնոյ լեզուն որպիսի նմոյշ է հին Հայոց լեզուին։ Զարմանք է որ հայ բանասէրք երբէք չեն մտածած այդ գաւառի բարբառն ուսումնասիրել և հրապարակ հանել։

Զ Տալորիկցի Հայուն բարբառն լսող Պոլսեցի գրագէտ մի պիտի իմանար թէ հայերէն է այն, բայց պիտի չկրնար հասկանալ թէ ինչ կ'ասէ, վասն զի առոգանութիւնն լեռնաբնակ և ամրակազմ ժողովրդի է, բաւական նման քրդական առոգանութեան։ Բայց ուշի ուշով ունկն դնելով՝ տակաւ պիտի սկսէր հասկանալ, պիտի գտնէր հասկացողութեան բանալիներն, և մի քանի աւուր ընտանութենէ յետոյ, ամեն ինչ պարզ պիտի երեւէր։

Սասունցւոց հայերէնին ուսումնասիրութիւնն պիտի չանեմք հոս. այդ մասին պատրաստեցինք մի երկար գրուած՝ յետոյ հրատարակելու։ Աստ կ'ուզեմք սահմանի միայն ասել թէ, որքան մեզ տըրուած է գիտնալ, Սասունցւոց հայերէնն քան զամենան մաքուրն, քան զամենայն քիչ աղաւաղեալն, և մանաւանդ իւր շարադրութեամբ քան զամենայն հարազատ ներկայացուցիչն է մեր հին դարերու, Արշակունեաց և Բագրատունեաց դարերու հայերէնին։

Մեր արդի գրական հայերէնին որոշ և հաստատուն կազմաւորութիւն տալու համար պարտ է մեր գրողաց լաւ ուսումնասիրել Սասունցւոց հայերէնն։ Բազում խնդիրներ, որք 50 տարիէ ի վեր վիճաբանութեան նիւթ են մեր մէջ, կը լուծուին կամ լուծման կը մօտենան շնորհիւ Սասնոյ հայերէնին։

«Հայքի» յաջորդ թուով պիտի հրատարակեմք հաւաքած մի բուռ Տալւորիկցւոց կենդանի հայերէն լեզուաւ։

5

ՍԱՍՆՈՑ ԲԱՐԵԲԵՐՈՒԹԻՒՆՆ

Սասնոյ լեռնային հանգամանքէն ոմանք կրնան ենթադրել թէ շատ յուռթի երկիր մի չէ այն և դժուար կրնայ սնուցանել հոծ ժողովուրդ։ Այդ ենթադրութիւն սխալ կը լինէր։ Սասուն զարմանալի աստիճանաւ յուռթի է և ջրաշատ, անտառաւէտ, պտղալից և պարարտարօտ երկիր։

Պտուղքն են խաղող, ինկոյզ, սալոր, խնձոր, տանձ, նուշ, սերկեւիլ, թուզ, նուռ, թութ, նաև մեզ անծանօթ մի քանի պտուղներ, որպիսի են մրկիթ, փշատ, բղինջ, փթեխ, կամփիտ և խոխ։ Ծխախոտն և բամպակն լաւ կը յաջողին։

Առատ են ցորեն, կլկիլ, կորեկ, սիսեռ։ Ունին ընտիր դդում, ձմերուկ, վարունգ։

Ծաղկունք գեղեցիկ են և բիւրազան. վարդ, շուշան, մանուշակ, ձունծաղիկ են.

Գէր ու կայտառ կը լինին ոչխար, կով, ջորի, ձի։

Վայրենի կենդանիներն են արջ, գայլ, աղուէս, խոզ, նապաստակ, կուզ, կուզիկ, եղջերու։

Նախնական բերքերէն զատ կան նաև բուպ, մեղր, ձէթ, մետաքս, գինի և շամիչ։

6

ՍԱՍՈՒՆՑՒՈՑ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ

Սասունցիք լոկ երկրագործ և հովիւ ժողովուրդ չեն, այլ և ունին արհեստներ։ Գիտեն հիւսնութիւն, ատաղձագործութիւն, ջուլհակութիւն, դարբնութիւն և սրագործութիւն։

Տալւորիկի գիւղախումբն է մանաւանդ որ երկաթի հանք կը հանէ, կը զտէ նախնական հնոցներու մէջ, և կը դարբնէ կացին, փայտատ, խոփ, խաչերկաթ, ուրագ, թուր և դաշոյն։

Սասունցւոց երկաթն աւելի մաքուր կը լինի և խոփն ընտիր, այնպէս որ դաշտի երկաթագործք 5 կամ 10 դահեկան աւելի կը վճարեն նոցա խոփին քան կարնէն եկածներուն։

7

ՍԱՍՈՒՆՑՒՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Այս տեղեկութիւններէ յայտնի է թէ Սասուն ունի բաւական վաճառք արտածելի, այսինքն երկաթ գործիներ, մետաքս, մեղր, բուպ, պտուղներ, ծխախոտ, բուրդ, մազ, ոչխար, արջառ, ջորի և ձի։

Իրենց գլխաւոր վաճառանոցքն են Մուշ, Ախլաթ, Տիարպէքիր ...

Դժբաղդաբար 10—15 տարիէ ի վեր շարունակ կ'իյնար Սասունցւոց վաճառականութիւնն։ Պատճառն այն է որ Թուրք կառավարութիւնն ուղղակի և անուղղակի նորանոր արգելքներ կը յարուցանէր նոցա առջև։ Սասունցիք իրենց լերանց վերայէն ապահով կը ճամբորդէին մինչև դաշտն, զի քաջ զինեալ էին և գիտէին դիմադրել քրդային յարձակմանց, բայց երբ իրենց հողէն հեռու, դաշտն, մանաւանդ քաղաքներն իջնէին, կ'ենթարկուէին ամենակերպ հարստահարութեանց։

Օրինակի համար, Թուրքն կը մօտենայ Սասունցւոյն, որ ոչխար, մեղր կամ ուրիշ վաճառք ունի, գին կը կտրէ, կը համաձայնին, և երբ դրամն վճարելու կուգայ կարգն, կը դրժէ Թուրքն զիւր խօսք, ոչխար գլուխ 40 դահեկանի տեղ 25 կ'ուզէ վճարել։ 500 դահեկանի մեղրին համար 250 կուտայ։ Կը ծագի վէճ, երբեմն Սասունցին ծեծ ալ կ'ուտէ, և եթէ կառավարութեան գանգատի, աւելի վնաս կը կրէ, ուստի և տրուած ստակն յակամայից կ'ընդունի և կը դառնայ իւր երկիր։

Ճանապարհին, քուրդ և Թուրք գիւղերու մէջ կամ մօտակայքն, Սասունցիք յարձակում կը կրեն, կը կողոպտուին ապրանքէն ու ջորիներէն միանգամայն։ Իրենք բաւական շատուոր չեն ամբողջ գիւղի մի դէմ դնելու, կառավարութիւնն ալ իրենց չի լսեր եթէ գանգատին, ուստի ձեռն ունայն կը դառնան ի Սասուն։

Այս պատճառաւ նոքա վերջին 5—6 տարիներն գրեթէ բոլորովին ձեռնթափ եղած են շերամապահութենէ, մեղուաբուծութենէ և ծխախոտի մշակութենէ։ Վերջապէս անանկ եղած էր որ վերջին երկու տարիներն քաղաքներն երթալէ գրեթէ բոլորովին կը զգուշանային։ Վաճառականք կուգային և աժան աժան կը գնէին ի Սասուն իսկ նոցա ապրանքներ։

Այս կը բերէ մեզ 1893ի և 1894ի դէպքերուն։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, 28 Օգ. 1895

Կլատսթոնի Օգ. 5ին և Սօլզպէրիի Օգ. 12ին խօսած հայապաշտպան ճառերն ոգեւորութիւն տուին հայ հասարակութեան և կատղեցուցին զՍուլթանն և Աւագանին։

Սօլզպէրի չրջաբերականաւ մը ծանուցած է մեծ տէրութեանց թէ՝ Միջերկրականի Անգլիական նաւատորմիղն իւր Պոլսոյ դեսպանին տրամադրութեան տակ կը դնէ, և միանգամայն հրաման ըրած է նաւատորմղի հրամանատարին որ մի քանի զրահաւորներ դէպ ի Չանագ-Գալէ յառաջանան։ Արդէն մի քանի օրէ ի վեր մի քանի զրահաւորներ Միտիլլիի մօտ յԱյվալըգ խարսխած են, իսկ միւսներն Զմիւռնիա կը գտնուին։ Անգղիոյ դեսպանն այսօր կամ վաղն Զմիւռնիա կ'երթայ նաւատորմղի հրամանատարին հետ անձամբ խօսակցելու համար։ Պոլսոյ ջրերուն մէջ նաւային ցոյց մը կը սպասուի ի մօտոյ։ Ժամանակէ մ'ի վեր Ռուսիոյ Միջերկրականի նաւահանգստէն զրահաւորներ Պօսֆորէն անցնելով Սև Ծով կ'երթան. Սև Ծովու ռուս նաւատորմիղն կը զօրանայ. նպատակըն դիւրին է կռահել։

Սուլթանն այս շարժումներէն սարսափելով Գերմանիոյ և Աւստրիոյ դիմած է և նոցա միջամտութիւնն կը հայցէ։

Գահակալութեան տարեդարձին յուզում մը կը սպասուի, նոյն իսկ թուրք երիտասարդութեան կողմանէ։

Պատրիարքարանի և Դրան միջև յարաբերութիւնք աւելի քան երբէք ձըգտեալ են. Պատրիարք Հայրն, երկաթէ կամօք միշտ կը գործէ անվրդով։ Անցեալ կիրակի (25 Օգ.) բոլոր հայ եկեղեցեաց մէջ Սասունի կոտորելոց համար հոգեհանգստի պաշտօն կատարել տուաւ. Սուլթանն առ այս զայրոյթ է զգացեր, խիստ դիտողագիր մը հասաւ երէկ ի պատրիարքարան։

Կէտիք-Փաշայի կողմն հայ բողոքականք 15 տարիներէ ի վեր հող մը գնած են եկեղեցւոյ մը շինութեան համար, անհնար եղած էր ցարդ շինութեան հրաման առնուլ. որոշած ըլլալով վերջապէս փայտէ մատուռ մ'ունենալ, կանխաւ պիտոյքըն պատրաստած էին այդ հողին մէջ և շրջականերն, և ահա անցեալ Հինգշաբթի (22 Օգ.) գիշերն մի քանի ժամուան մէջ մատուռն կը կառուցանեն և խաչով մը ճակատն կը պսակեն։ Ոստիկանութիւնն վրայ կը հասնի և փլցնել կը փորձէ. ժողովուրդն կ'ընդդիմանայ և կառավարութեան կողմանէ Աստուծոյ աղօթից տուն մը փլցնելու հրահանգ չունենալնին առարկելով, կը շարունակէ իւր գործն. ոստիկանութեան նախարարի փոխանորդն կը հասնի և կ'արգելու այլ և ս գամ մ'իսկ գամելու. ժողովուրդն կը դատարկի, բայց մատուռն կառուցուած էր։ Եկեղեցական պաշտամունք կը սկսին։ Անցեալ կիրակի խուռն բազմութիւն դիմած է այդ մատուռն իբր ուխտատեղի և աւելի քան 8 ոսկի ձգուած է գանձանակն։

ՔԱՋԱԼԵՐՈՒԵՑԷ՛Ք, ՀԱՅԵ՛Ր,

Ցորմէ հետէ Անգլիոյ Նախարարապետըն Լորտ Սօլզպէրի, Խորհրդարանին մէջ, տուաւ իւր միշտ յիշելի յայտարարութիւն թէ Սուլթանին անկախութիւնն բնական չէ այլ յատկապէս թոյլ տրուած, բովանդակ Անգլիական և Ամերիկեան Մամուլն նորոգ քաջութեամբ և մեծագոյն ուժգնութեամբ յառաջ կը տանի իւր մեծ պայքարն ընդդէմ Թուրքիոյ։ Ամենուն խնդագին աղաղակն է թէ Օսմ. կայսրութիւնն դատապարտեալ է մօտալուտ քայքայման։

Գլխաւոր թերթերու այդ իմաստով խմբագրականներէն նմոյշներ կուտամք մեր ընթերցողաց ի քաջալերութիւն։

ՏԱԳՆԱՊ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Թուրքիա հաւանօրէն պիտի թողուի այժմ պատմութեան օրինաց ձեռքն, որոյ զօրութեամբ կը կորնչին այն թագաւորութիւնք որք այլ և ս ապրելու արժանի չեն։ Օսմանեան կայսրութիւն մի մեծ անժամանակակցութիւն է։ Նա կը ներկայէ բարբարոսութեան այն հեղեղն որ աշխարհիս գեղեցկագոյն երկիրներէն մին ողողեց երբ քաղաքակրթութիւնն անկեալ էր և զինութիւնն աւերած էր զժողովուրդն։ Սակայն ասիական այդ պատուհասն տակաւին կը մնայ յԵւրոպա, թէպէտ և բոլոր քրիստոնեայ ժողովուրդք նորա բոլորն կ'ապրին ժթ դարու ոգւովն։

Ինչո՞ւ արդեօք ազգային կենաց օրէնքըն ընդմիջուած կ'երևի այս դէպքին մէջ։ Անգլիոյ քաղաքականութիւնն արգելք եղած է անոնց որք ի բաց պիտի վտարէին

զԹուրքն։

Բայց փոփոխութիւն մի կայ այժմ։ Անգլիա հանդարտօրէն կ'ասէ Թրքին թէ պարտի կա՛մ ուղղել ընթացքն կամ կրել հետեւանքն։ Թուրքն չի կրնար փոխել ընթացքն, և ուստի պիտի կրէ հետեւանքն։

Անգլիոյ նոր դիրքն դարագլուխ մի կը նշանակէ օսմանեան պատմութեան մէջ։ THE WORLD

ԽՍՄԷԹ

Կլատսթոն կը սպառնար արտաքսել զՏաճիկն յԵւրոպիոյ. Սալզպէրի կը սպառնայ նորա կայսրութիւնն բառնալ ի միջոյ։ Այդ է արդարեւ Բրիտանական վերջնագրին նշանակութիւնն։

Կացութեան ծանրութիւնն, գէթ չափով մի, կը զգան ի Կ. Պոլիս։ Դուռն դիմում արած է Ռուսիոյ և Ֆռանսայի։ Դիմումն ընդ ունայն եղած է։ Անգլիոյ «պարտի՛ս»ն Եւրոպիոյ ձայնն է այժմ։ Լորտ Սալզպէրիի խօսքերն ի Խորհրդարանի անդ, ծանրութեամբ արտաբերեալ խօսքեր են, և արտաբերեալ են մի լուրջ և պատասխանատու պետական մարդու մի շրթունքէն։ Զայնս միանգամ արտասանած գոլով, պարտի կատարել զայնս, թէ ոչ՝ արժանանալ աշխարհի արհամարհանաց։ Ամեն պատճառ կայ հաւատալու թէ Լորտն իրաւ կ'ասէ, և պիտի կատարէ։

Հաւանական է թէ բաշխումն մէկէն չպիտի կատարուի։ Դուռն զինու զօրութեամբ դիմադրել չպիտի փորձէ։ Սակայն և այնպէս Անգլիոյ այս գործողութիւնն կրնայ նշանադիր լինիլ Օսմանեան Պետութեան վախճանին սկսելուն։ Այս կը նշանակէ Հայաստանի և Քրդաստանի գործնականօրէն կորուստն, և այդ՝ ասիական Թուրքիոյ լաւագոյն մասին կորուստն է։ Ֆռանսական ընկերութիւն մի Հայֆայէն մինչև Դամասկոս շինած է երկաթուղի մի, այնպէս որ Պաղեստին և Սիւրիա գըրեթէ կեավուրի ափին մէջ են։ Մակեդոնիա յապստամբութեան է արդէն, և Դըրան ազդեցութեան տրուած այս հարուածըն պիտի փութացունէ վերջնական աղէտըն անդ և յԱպանիա։ Ի՞նչ կը մնայ անդին։ Թրակիա, մի քանի գաւառներ ի Փոքր Ասիա, և կղզի մի կամ երկուք։ Եւ այդ խեղճ մնացորդն ալ արդէն սնանկ է։ Ներկայ սերունդն, թերեւս վերջացող ներկայ դարն, հաւանականօրէն պիտի տեսնէ զՕսմանեան Կայսրութիւնն անցած գնացած ճիշդ որպէս Մոկուլայ կայսրութիւնն։ THE TRIBUNE

ՆԻՒ ԵՈՐՔ

ԼԷԹ ԼԸՈՒՕ

անունն է Ուստերի Ֆրոնթ փողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, չապիկ, օձիկ, փողկապ, ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչեւ կէս օրէն վերջ 4։ Շաբաթ օրերն 9էն մինչև 1։

Հասցէն է 314 Մէյն փողոց։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻՔԸՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետեւեալ պայմաններով վճարելի յԵւրոպա.

Ոչ աւելի քան			5	տոլար	5 սէնթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ



Misak M. Philip,

Mechanical Engineer.

25 Monroe St., New York, N. Y.

A 212

A419

Պատիւ ունիմ ծանուցանել թէ Ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչեւ 11 ժամացոյց նորոգելու։

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով։ Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբեբայ Հրէից և այլ ազգաց որ կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին։

Նաև կ'ուզեմ ծանուցանել հայ երիտասարդաց որոնք մտադիր են Ամերիկայի շահաւոր և Հայաստանի համար օգտակար արհեստ մը սովրիլ, կարող եմ հետեւեալ արհեստներն քիչ ծախքով և կարճ ժամանակի միջոցաւ լիովին դասաւորակել։— գործնական և ուսումնական շոգեշարժ մեքենագործութիւն— ժամագործութիւն— լուսանկարութիւն— լուսանկարական բացատական և գրական թուղթի և ապակի շինելու նորագիւտ կերպը— Կրակավառութիւն— և թէ ի՞նչ պէս գործարաններուն մէջ գործ կարող են ստանալ և յառաջադիմել առանց Թրքէն ժառանգ ինկած գիւտն (կաշառք) գործածելու։

Իմին 16 տարուայ ունեցած փորձառութիւնս և երկրագնդին չորս կողմը շրջագայելս մեծ երաշխիք մը կ'ինձ դիմողներն գոհացուցնելու։

ՄԻՍԱՔ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ